



«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ


# 2020թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի միջև 23.03.2020թ.-ի կնքված՝ «Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն՝ ուսումնասիրություններ և փորձաքննություններ» ծրագրի No 1 պայմանագրի կատարման



**«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»**





**Ս. ՄԱՂՅԱՆ**

**«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի**

**գլխավոր տնօրենի**

**ժամանակավոր պաշտոնակատար**

**30 սեպտեմբերի 2020թ.**

«Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի հսկողություն» ուսումնասիրություններ  
և փորձաքննություններ» ծրագրի պայմանագրի շրջանակներում «Ճանապարհային  
դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ուժերով 2020թ. երրորդ եռամսյակում իրականացվել են  
հետևյալ աշխատանքները, ըստ ներքոհիշյալ ենթածրագրերի՝

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ  
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....5

1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի  
տեխնիկական տվյալների հավաքագրում.....6

1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն .....9

1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների  
վերականգնման ծրագրերի մշակմանը ..... 18

1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և  
վարում .....20

1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում.....21

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ,  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 24

2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և  
հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ  
ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական  
դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝  
հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով..... 25

2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային  
ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների,  
կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների  
աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման  
հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝  
հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով.....26

2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում.....	28
3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	31

1. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ  
ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ  
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **1.1 Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում**

Հաշվետու եռամսյակում՝ համաձայն հաստատված մեթոդաբանության, հավաքագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալները՝ 773.85 կմ ընդհանուր երկարությամբ: Հետազոտվել են միջպետական նշանակության՝ 630.25 կմ և հանրապետական նշանակության՝ 143.6 կմ ավտոմոբիլային ճանապարհներ: Ուսումնասիրությունը իրականացվում է ակնադիտական (ավտոմոբիլային ճանապարհների ծածկի տեսանելի թերությունների հավաքագրում) և գործիքային մեթոդներով (IRI միջազգային անհարթության գործակցի որոշում): Կատարված ուսումնասիրությունների արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն տարեկան հաշվետվությունում:

Հավաքագրված տվյալները համատեղելուց և ընթացիկ վերլուծություն իրականացնելուց հետո մուտքագրվում են HDM տնտեսագիտական վերլուծական մոդելում՝ միջնաժամկետ և երկարաժամկետ վերականգնողական ծրագրեր մշակելու նպատակով:

Ստորև ներկայացվում է հաշվետու եռամսյակում հետազոտված միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների անվանացանկը.

**Հերազդրված ճանապարհահաղթումների ցանկ**

<b>N</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>I կարգ, կմ</b>	<b>Այլ կարգեր, կմ</b>	<b>Ընդամենը, կմ</b>
<b>1.</b>	<b>2.</b>	<b>3.</b>	<b>4.</b>	<b>5.</b>
<b>Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ</b>				
1.	Մ-1 Երևան – Գյումրի – Վրաստանի սահման կմ 148+300 – կմ 152+600		4.3	<b>4.3</b>
2.	Մ-1 Երևան – Գյումրի – Վրաստանի սահման կմ 156+700 – կմ 173+700		17.0	<b>17.0</b>
3.	Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման կմ 91+600 – կմ 98+000, 126+100 – կմ 150+700, 174+100 – կմ 196+000, 202+200 – կմ 254+000, 277+000 – կմ 284+400, 289+100 – կմ 299+000, 308+000 – կմ 364+000		178.0	<b>178.0</b>
4.	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման կմ 10+500 – կմ 17+900, կմ 21+500 – կմ 45+300, կմ 75+500 – կմ 94+200, կմ 105+000 – կմ 112+900, կմ 116+900 – կմ 127+900		68.8	<b>68.8</b>
5.	Մ-4 Երևան – Սևան – Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման կմ 73+300 – կմ 83+200, կմ 91+200 – կմ 128+000, կմ 134+000 – կմ 148+200		60.9	<b>60.9</b>
6.	Մ-6 Վանաձոր (Մ-3 հատման կետ) – Ալավերդի – Վրաստանի սահման կմ 0+000 – կմ 38+450		38.45	<b>38.45</b>
7.	Մ-7 /Մ-3/ – Սպիտակ – Գյումրի – Թուրքիայի Հանրապետության սահման կմ կմ 19+000 – կմ 30+500, կմ 36+000 – կմ 42+800		18.3	<b>18.3</b>
8.	Մ-8 Վանաձոր (Մ-6 հատման կետ) – Դիլիջան կմ 10+500 – կմ 33+500		23.0	<b>23.0</b>
9.	Մ-11 Մարտունի – Վարդենիս – Արցախի Հանրապետության սահման կմ 6+000 – կմ 56+200		50.2	<b>50.2</b>

10.	Մ-12 /Մ-2/ (Գորիս) – Արցախի Հանրապետության սահման		28.5	<b>28.5</b>
11.	Մ-16 /Մ-4/ - Ոսկեպար – Նոյեմբերյան - /Մ-6/ կմ 7+000 – կմ 59+000		52.0	<b>52.0</b>
12.	Մ-17 /Մ-2/ (Կապան) – Ծավ – /Մ-2/		90.8	<b>90.8</b>
	Ընդամենը՝		<b>630.25</b>	<b>630.25</b>
<b>Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ</b>				
1.	Հ-4 Երևան -Եղվարդ -Արագյուղ -Հարթավան - /Մ-3/ կմ 15+600 – կմ 33+500, կմ 34+800– կմ 41+200		24.3	<b>24.3</b>
2.	Հ-23 /Մ-3/ - Պուշկինյան լեռնանցք - /Մ-3/		13.4	<b>13.4</b>
3.	Հ-24 /Մ-3/-Գյուլագարակ-Կուրթան-/Մ-6/		21.1	<b>21.1</b>
4.	Հ-35 /Մ-6/-Օձուն-Արևածագ-/Հ-24/ կմ 0+000 – կմ 14+800		14.8	<b>14.8</b>
5.	Հ-40 /Մ-2/ (Արենի) - Խաչիկ - Գնիշիկ - Եղեգնաձոր կմ 0+000 – կմ 23+000, կմ 47+000 – կմ 70+000		46.0	<b>46.0</b>
6.	Հ-42 /Մ-2/ - Զառիթափ – Նոր Ազնաբերդ - Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 9+500		9.5	<b>9.5</b>
7.	Հ-45 /Մ-2/ - Շաքի – Սիսիան – Դաստակերտ – Յղունի կմ 0+000 – կմ 14+500		14.5	<b>14.5</b>
	Ընդամենը՝		<b>143.6</b>	<b>143.6</b>

<b>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ (ներառյալ I տեխ. կարգը)</b>		<b>773.85</b>	<b>773.85</b>
--	--	---------------	---------------

III եռամսյակ	Նախատեսված	Փաստացի
	650	773.85
I-III եռամսյակներ	1100	1101

Բոլոր կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:



## 1.2 Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն

Հայաստանի Հանրապետության 3 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 5 կետերում տեղակայված են ավտոմոբիլային տրանսպորտի ինտենսիվությունը չափող 5 առցանց աշխատող SIEMENS մակնիշի հաշվիչներ:

Սրացված ինտենսիվության տվյալները հանդիսանում են HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի մուտքային տվյալ (AADT – միջին օրական ինտենսիվությունը տարվա կտրվածքով):

Հաշվիչները տեղակայված են հետևյալ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա.

Կետ No1 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298+000 (Կապանի ՃՇՇ-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No2 Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/ք գործարանի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No3 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126+000 (Լոռու ՃՇՇ-ի մոտ) – 1 հաշվիչ

Կետ No4 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ) – 1 հաշվիչ


Կետ No5 Մ-4 Երևան – Սևան – Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ կմ 80+000 (Դիլիջանի թունելի մոտ) – 1 հաշվիչ

Հաշվետու եռամսյակում կատարվել են Հայաստանի Հանրապետության 3 միջպետական ավտոճանապարհների 5 կետերում տեղակայված հաշվիչների կարգաբերման աշխատանքներ և հաշվիչների տվյալների հավաքագրում:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղակայված առցանց աշխատող հաշվիչների տվյալների միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.


1 Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 298 (Կապանի ՃՇՇ-ի մոտ )

	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ բանաստորային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդափար	բեռնափար	բեռնափար կցորդով
		1	2	3
<b>Ընդամենը</b>	<b>5652</b>	<b>4945</b>	<b>514</b>	<b>193</b>




2 Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 367+250 (Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
<b>Ընդամենը</b>	<b>1557</b>	<b>1173</b>	<b>201</b>	<b>183</b>




3 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 126 (Լոռու ՃՇՇ-ի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
<b>Ընդամենը</b>	<b>8717</b>	<b>8220</b>	<b>377</b>	<b>120</b>




4 Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ա/ճ-ի կմ 135+160 (Պուշկինի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ տրանսպորտային միջոցների դասակարգման (ավտոմոբիլ)		
		թեթև մարդատար 1	բեռնատար 2	բեռնատար կցորդով 3
<b>Ընդամենը</b>	<b>3603</b>	<b>3378</b>	<b>157</b>	<b>68</b>




5 Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի Հանրապետության սահման ա/ճ-ի կմ 80  
(Դիլիջանի թունելի մոտ)

Ուղղությունը	Միջին օրական ինտենսիվությունը (ընդամենը՝ տր.միջոց)	Միջին օրական ինտենսիվությունը ըստ բանասպորտային միջոցների դասակարգման(ավտոմոբիլ)		
		թեթև մարդափար 1	բեռնափար 2	բեռնափար կցորդով 3
<u>Ընդամենը</u>	7981	7358	404	219




Հաշվելու ժամանակաշրջանում իրականացված չափումների հիման վրա կազմվել է տրանսպորտային միջոցների հոսքի միջին օրական ինտենսիվության համեմատություն՝ ըստ չափման կետերի.

**2020թ. երրորդ եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը**



**2019-2020թթ. երրորդ եռամսյակի չափումների արդյունքների համեմատական գրաֆիկական պատկերը**

**հետևյալն է**



Ինչպես երևում է 2019-2020թթ. 3-րդ եռամսյակի համեմատական գրաֆիկից ավտոտրանսպորտային միջոցների ինտենսիվությունը

Կետ - 1 Կապանի ՃՇՇ-ի մոտ՝ աճ

Կետ - 2 Մեղրու ՃՇՇ-ի ա/բ գործարանի մոտ՝ աճ

Կետ - 3 Լոռու ՃՇՇ-ի մոտ՝ աճ

Կետ - 4 Պուշկինի թունելի մոտ՝ աճ

Կետ - 5 Դիլիջանի թունելի մոտ՝ նվազում

HDM-4 տնտեսագիտական վերլուծության ծրագրի համար անհրաժեշտ մուտքային տվյալները (AADT – տարվա կտրվածքով միջին օրական ինտենսիվությունը) հավաքագրվել են նաև շարժական հաշվիչների միջոցով՝ համաձայն հաստատված մեթոդաբանության:

Ըստ շարժական հաշվիչների գրանցման տվյալների, միջին օրական ինտենսիվությունը հետևյալն է.

#### Միջպետական և հանրապետական ավտոճանապարհներ

No	Ճան կող	Ճանապարհի անվանումը	կմ	մարդատար	բեռնատար	բեռնատար կցորդով	ընդամենը
1	Մ-1	Երևան – Գյումրի – Վրաստանի սահման	20	24613	724	119	25456
2			131	4151	236	85	4472
3			152	1148	124	85	1357
4			167	137	12	85	234
5	Մ-2	Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման	12	29175	1326	294	30795
6			121	5226	407	243	5876
7			135	4375	381	258	5014
8			144	3841	374	258	4473
9	Մ-3	Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման	17	9844	273	8	10125
10			24	7804	308	22	8134
11	Մ-4	Երևան – Սևան – Իջևան – Ադրբեջանի	10	41873	2278	245	44396
12			16	23536	1351	226	25113



13		Հանրապետության սահման	31	21563	1056	218	22837
14	Մ-4	Երևան - Սևան - Իջևան	47	19495	725	212	20432
15		- Ադրբեջանի	57	14024	425	202	14651
16		Հանրապետության	73	7412	370	226	8008
17		սահման	104	3726	347	245	4318
18	Մ-7	/Մ-3/- Սպիտակ -	40	3662	187	16	3865
19		Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման	49	358	14	0	372
20	Մ-9	/Մ-1/- Թալին -	3	1674	31	2	1707
21		Քարակերտ - Շենիկ -	17	1516	28	2	1546
22		Բազարան - Թուրքիայի Հանրապետության սահման	40	294	12	0	306
23	Մ-10	Սևան-Մարտունի - Գեղափ - /Մ-2/	3	7153	362	31	7546
24			32	6640	325	31	6996
25			64	7562	348	30	7940
26			107	607	29	17	653
27			125	3305	137	17	3459
28	Մ-11	Մարտունի -	2	4889	179	8	5076
29		Վարդենիս - Արցախի	36	5913	284	8	6205
30		Հանրապետության սահման	55	495	44	5	544
31	Մ-14	/Մ-4/- Շորժա - Վարդենիս	0.4	2548	83	4	2635
32			27.5	1819	51	4	1874
33			96	1523	48	2	1573
34	Հ-4	Երևան -Եղվարդ -	8	6167	136	7	6310
35		Արագյուղ -Հարթավան -	16	1290	61	4	1355
36		/Մ-3/	41	1364	53	2	1419
37	Հ-10	/Հ-8/ (Ոսկեդաշտ) - Վեդի - Լանջառ - /Մ-2/	3	4316	206	10	4532
38			15	1874	72	8	1954
39			39	1219	56	8	1283
40	Հ-19	Աշտարակ - Օշական - /Մ-3/	6.5	2508	45	0	2553

41	Հ-21	/Հ-75/- Հոռոմ – Արթիկ - Ալագյազ	2	2371	147	6	2524
42			48	2134	93	4	2231
43	Հ-30	/Մ-4/- Ճամբարակ - /Մ-14/	2	998	26	1	1025
44			31	821	20	1	842
45			37	893	17	1	911
46			55	1287	27	2	1316
47	Հ-30-1	Մոտեցում Գոշավանքին	0,1	401	11	0	412
48	Հ-40	/Մ-2/ (Արենի) - Խաչիկ - Գնիշիկ - Եղեգնաձոր	2	1460	32	0	1492
49			69	1303	41	2	1346

Հաշվետու եռամսյակում տեղադրված հաշվիչներից, ինչպես նաև շարժական հաշվիչներով և ակնադիտական եղանակով տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է 53 այցելություն 54 կետերում:

III եռամսյակ	Նախատեսված	Փաստացի
հաշվեկետ	46	54
այցելություն	40	53
I-III եռամսյակներ		
հաշվեկետ	85	94
այցելություն	102	119

Կատարվել է հավաքագրված տվյալների ամփոփում, մուտքագրում համակարգիչ և համապատասխան վերլուծություն:

Բոլոր կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.3 Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վերականգնման ծրագրերի մշակմանը**

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից, պարբերաբար իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

- տեխնիկական և մասնագիտական աջակցություն ոլորտի խորհրդարարություններին,
- մասնակցություն միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին և քննարկումներին,
- մասնագիտական աջակցություն «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգի» ծրագրային հավելվածը մշակող «Լոկատոր» ՓԲԸ մասնագետներին:

2020 թվականի ընթացքում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից հավաքագրված, ամփոփված և համադրված տվյալների հիման վրա համակարգչային HDM-4 տնտեսագիտական վերլուծությունների մոդելի կիրառման միջոցով կիրականացվի վերականգնմանն առաջարկվող ճանապարհահատվածների միջնաժամկետ ծրագրի մշակում: 2022թ. վերականգնմանն առաջարկվող ճանապարհահատվածների վերաբերյալ առաջարկությունները կներկայացվեն տարեկան հաշվետվության հավելվածում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

#### 1.4 Ավտոմոբիլային ճանապարհների գույքագրում, տվյալների շտեմարանի լրացում և վարում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, գույքագրվել և տեսաձայնագրվել են միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհահատվածներ՝ շուրջ 279 կմ ընդհանուր երկարությամբ:

##### Գույքագրված ճանապարհահատվածների ցանկ

N	Ճանապարհի անվանումը	I կարգ, կմ	Այլ կարգեր, կմ	Ընդամենը, կմ
1.	2.	3.	4.	5.
<b>Միջպետական նշանակության ավտոճանապարհներ</b>				
1.	Մ-2 Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի Իսլամական Հանրապետության սահման, կմ 121+000 – կմ 320+000		199.0	<b>199.0</b>
2.	Հ-6 /Հ-2/ - Նոր Գեղի - Եղվարդի տրանսպորտային հանգույց - /Մ-1/		24.7	<b>24.7</b>
3.	Հ-7 /Հ-5/ - Կարենիս - Չարենցավան /Հ-1/ (Ֆանտան)		13.0	<b>13.0</b>
4.	Հ-11 /Մ-2/ (Փոքր Վեդի) - Լուսառադ - Եղեգնավան - /Մ-2/		15.3	<b>15.3</b>
5.	Հ-52 /Մ-2/ - Մալիշկա - /Մ-2/		7.3	<b>7.3</b>
6.	Հ-72 /Մ-2/ - Վահանավանք		2.4	<b>2.4</b>
7.	Հ-74 /Մ-2/ - Սիսիան		4.6	<b>4.6</b>
8.	Հ-80 /Մ-2/ - Սիսիանի օդանավակայան		0.35	<b>0.35</b>
9.	Հ-94 /Մ-2/ (Գորիս)-/Հ-46/ (Շինուհայր)		11.1	<b>11.1</b>
10.	Հ-94-1 Մոտեցում Գորիսի օդանավակայանին		1.0	<b>1.0</b>
	<b>Ընդամենը՝</b>		<b>278.75</b>	<b>278.75</b>

III եռամսյակ	Նախատեսված	Փաստացի
	250	278.75
I-III եռամսյակներ	420	399.35

Իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում հավաքագրված տվյալների ամփոփում և վերլուծություն, ինչպես նաև տվյալների շտեմարանի լրացում և վարում:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

### **1.5 Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում**

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները և միջոցառումները.

1. Քաղաքացիների, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների տեղամասերում ճանապարհային երթևեկության անվտանգությունը և կազմակերպումը բարելավելու ուղղությամբ հարցումների, դիմումների, բողոքների, առաջարկությունների կապակցությամբ տրվել են 16 պարզաբանումներ և 6 կարծիք (ընդ որում ճանապարհներին միջին (5) և հիմնական (1) նորոգումների տեղամասերում):

Ստացված նյութերի և առաջարկությունների քննարկումների արդյունքում Բերդ քաղաքում թույլատրվել են տեղակայելու 2 արհեստական անհարթություններ: Տարբեր ճանապարհների (Մ-6, Մ-8, Հ-5, Հ-6, Հ-17) տեղամասերում հանձնարարվել են տեղակայելու 16 ճանապարհային նշաններ, այդ թվում՝ 3.24 «Առավելագույն արագության սահմանափակում» - 10 հապ, 5.20 «Արհեստական անհարթություն» - 2 հապ, 3.20 «Վազանցն արգելվում է» - 2 հապ, 8.2.1 «Ազդման գոտի» - 2 հապ, իսկ երկու դեպքում փոխվել են բնակավայրերի սկզբի և վերջի բովանդակությունը նշող ճանապարհային նշանները: Ճանապարհային ոստիկանության (ՃՈ) համաձայնության հիման վրա զբոսաշրջության շրջանակներում գործող երկու

կազմակերպություններին թույլ են տրվել տեղակայելու զբոսաշրջության օբյեկտների վերաբերյալ ուղղությունների անհատական նախագծման նշաններ:

Միաժամանակ ավտոճանապարհներին տեղի ունեցող միջին նորոգումների 4 տեղամասերում քննարկվել են նորոգման աշխատանքների կատարման ընթացքում ճանապարհային երթևեկության ժամանակավոր կազմակերպման 5 գծապատկերները: Իրականացվել է մասնագիտական աջակցություն՝ ճանապարհային ոստիկանությանը լիարժեք գծապատկեր ներկայացնելու նպատակով:

2. Միջպետական և հանրապետական ավտոճանապարհներին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) վերաբերյալ համապատասխան շտեմարանի բացակայության պատճառով չի իրականացվել պատահարների առաջացման պատճառների, ճանապարհային նպաստող պայմանների ուսումնասիրությունների, չի որոշվել ՃՏՊ կուրակման վայրերը՝ հետագա միջոցներ ձեռնարկելու համար: 2019 և 2020 թվականների ընթացքում միջպետական և հանրապետական ավտոճանապարհներին տեղի ունեցած ՃՏՊ-ի վերաբերյալ ամսական կտրվածքով տվյալներ ձեռք բերելու խնդրանքով դիմել ենք ՃՈ՝ ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելու նպատակով, սակայն ՃՈ-ից տվյալներ չեն ստացվել:

3. ՀՀ վարչական դատարանի հարցումներին ի պատասխան կազմվել են թվով 14 գրություններ:

4. Կարծիք է ներկայացվել՝

4.1. Միջպետական Մ-2, Մ-3, Մ-4, Մ-10, Մ-15 և հանրապետական Հ-5, Հ-8 նշանակության ավտոճանապարհի ճանապարհային երթևեկության կազմակերպման բարելավման ուղղությամբ (նշանների տեղակայում կամ փոփոխություն, գծանշումներ, դիրահորների վերականգնում և այլն)՝ ընդհանուր թվով 12 գրություն:

4.2. ՃՈ կողմից ներկայացված՝ ճանապարհատրանսպորտային պատահարի նոր քարտի օրինակի վերաբերյալ:

4.3. Կարծիք է ներկայացվել Կոտայքի քննչական մարմիններին ճանապարհին կից կառույցներ տեղադրելու թույլտվություններ տալու մարմնի մասին:

4.4. Մ-4 ավտոճանապարհի Վերին Պտղնի գյուղի ստորգետնյա հետիոտնային անցման վիճակի վերաբերյալ:

4.5. Մ-3 ավտոճանապարհի 58-63կմ հատվածում մակերեսային մշակման աշխատանքները ճանապարհաշինական կամակերպության կողմից անբարեկարգ իրականացնելու վերաբերյալ քաղաքացու բողոքի մասին.

4.6. ՀՀ էկոնոմիկայի նախարարի ուղերձի կապակցությամբ առաջարկ է ներկայացվել ատանդարտներում հայկական այբուբենի տառաչափերը ընդգրկելու վերաբերյալ.

5. Հանձնարարականով ուսումնասիրվել է Աշտարակ - Եղվարդ տրանսպորտային հանգույցը, կազմվել է ճանապարհային նշանների տարաբաշխման գծապատկեր և զեկուցվել է ղեկավարությանը:

6. Հայաստանի ավտոճանապարհներով մեծ եզրաչափերով և ծանրաքաշ բեռնափոխադրումների իրականացման թույլտվությաններ ստանալու նպատակով տրվել են թվով 16 հատ երթուղիների վերաբերյալ եզրակացություններ:

7. Միջպետական և հանրապետական (բացառապես բնակավայրերով անցնող) նշանակության ավտոճանապարհներին արագաչափ սարքեր տողակայելու ուղղությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը դիմել է ՀՀ ոստիկանության պետին միջոցներ ձեռնարկելու նման սարքերի ձեռք բերման և ճանապարհներին տեղակայման ուղղությամբ:

8. Հ-3 և S-6-42 Մայակովսկի (S-6-37) – Ձորաղբյուր - /Հ-3/ (Զրվեժ) ավտոճանապարհների խաչմերուկում ճանապարհատրանսպորտային պատահարները կանխելու ուղղությամբ նախարարի տեղակալ Ք. Ղալեչյանին ներկայացվել է ճանապարհային երթևեկության կազմակերպման առաջարկություն:

Բոլոր կատարված աշխատանքների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

2. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԿԱՊԱԼԱՌՈՒ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ  
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ



**2.1 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ փարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային պահպանման, կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն հեղուկալ մարզերում:

Մարզի անվանումը	Սպասարկվող ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը, կմ
	Ամառային
Արագածոտն	281.1
Արարատ	217.3
Արմավիր	194.9
Գեղարքունիք	322.9
Կոտայք	290.2
Լոռի	317.3
Շիրակ	259.9
Սյունիք	404.6
Վայոց Ձոր	191.2
Տավուշ	409.9
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2889.2</b>

Ընթացիկ ամառային պահպանման ժամանակահատվածն է՝ ապրիլի 1-ից նոյեմբերի 15-ը:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կատարած ընթացիկ

Ամառային պահպանման աշխատանքները: Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքները թերի կատարելու պատճառով կապալառու կազմակերպություններից ընդհանուր առմամբ պահվել է 7452.0 հազ. դրամ, իսկ 2020թ. առաջին 9 ամիսների ընթացքում՝ 8826.9 հազ. դրամ:

Ամառային պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2010թ. նոյեմբերի 4-ին հաստատված N 1419-Ն կարգի համաձայն:

Բոլոր կատարված հսկողությունների և ուսումնասիրությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**2.2 Կատարված աշխատանքների ընդունման նպատակով Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում: Առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ փուլում պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով**

Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների պարբերաբար դիտարկում և գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր օգրագործման Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների, կամուրջների, պարսպող համակարգերի պահպանման և գծանշման աշխատանքների կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն, այդ թվում՝

➤ **Թունեւելներ**

- Պուշկինի թունել
- Դիլիջանի թունել
- Նալբանդի թունել:

➤ **Կամուրջներ**

- Արաքս գետի վրայի Մեղրիի կամուրջ,
- Հ-6 Աբովյան - Եղվարդ - Աշտարակ ավտոմոբիլային ճանապարհի Հրազդան գետի վրայի կամուրջ,
- Մ-1 Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Քասախ գետի վրայի կամուրջ,
- Մ-3 Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման ավտոմոբիլային ճանապարհի Ձորագետ գետի վրայի կամուրջ,
- Զերմուկ քաղաքի կամուրջ:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2010թ. դեկտեմբերի 12-ի N 710-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում թերություններ չեն հայտնաբերվել:

➤ **Պարսպող համակարգերի պահպանում և վնասված հատվածների վերականգնում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող 715.364 կմ ընդհանուր երկարությամբ պարսպող համակարգերի պահպանման կապալառուների կողմից իրականացված աշխատանքների մասնագիտական հսկողություն: Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքները թերի կատարելու պարճառով կապալառու կազմակերպություններից ընդհանուր առմամբ պահվել է 1652.6 հազ. դրամ, իսկ 2020թ. առաջին 9 ամիսների ընթացքում՝ 1766.7 հազ. դրամ:

Պահպանման աշխատանքների ընդունումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի կողմից 2011թ. փետրվարի 24-ի N 79-Ն հրամանով հաստատված ընդունման կարգի համաձայն:

Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում թերություններ չեն հայտնաբերվել:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

➤ **Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքների՝ 2229 կմ ընդհանուր երկարությամբ /461312.4մ<sup>2</sup>/, կապալառուների կողմից իրականացված միջոցառումների մասնագիտական հսկողություն:

Կատարվել է համապատասխան գրառումներ գրանցման մատյաններում, որի հիման վրա ընդունվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված պահպանման աշխատանքները:

Հաշվետու եռամսյակում նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում թերություններ չեն հայտնաբերվել:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**2.3 Ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման աշխատանքների մշտադիտարկում, հսկողություն և գնահատում**

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է միջին նորոգման թերությունների ակտ և իրականացվել է ստորև ներկայացված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների մշտադիտարկում:

<b>Ճանապարհահատված</b>	<b>Երկարություն, մ</b>
<b>Մ-5 Երևան - Արմավիր - Թուրքիայի սահման</b>	
կմ11+190 - կմ11+727 (աջ կողմ)	537
կմ14+400 - կմ15+715 (աջ կողմ)	1315
կմ16+150 - կմ17+530 (աջ կողմ)	1380
<b>Ընդամենը</b>	<b>3232</b>
<b>Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա - Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման</b>	
կմ54+000 - կմ56+324	2324
կմ58+00 - կմ65+450	7450
կմ 66+600 - կմ 69+900	3300
կմ 94+210 - կմ 97+020	2810.0
<b>Ընդամենը</b>	<b>15884</b>
<b>Մ-7, Սպիտակ - Գյումրի - Թուրքիայի սահման</b>	
կմ 0+000 - կմ 4+350	4350
կմ 5+450 - կմ19+000	13550
կմ 30+500 - կմ31+700	1200
կմ33+300 - կմ36+000	2700
<b>Ընդամենը</b>	<b>21800</b>
<b>Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ</b>	
կմ24+554 - կմ 50+000	25446
<b>Ընդամենը</b>	<b>25446</b>
<b>Ընդհանուրը</b>	<b>66362</b>

Հաշվելու ժամանակահատվածում իրականացվել նաև ընդհանուր առմամբ 68.144 կմ ճանապարհահատվածների ուսումնասիրություն. մասնավորապես.

1. Մ-1 Աշտարակ-Եղվարդ տրանսպորտային (1.747կմ) հանգույցի համար կազմվել է թերությունների ակտ, հայտարարվել է մրցույթ, ճանաչվել է հաղթող կազմակերպություն սակայն շինարարարական աշխատանքներ չեն կատարվել:

2. Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 39+500 - կմ 45+300 (5.8կմ) կադարվել է ակնադիտական և լաբորատոր ուսումնասիրություն և հանգել ենք եզրակացության, որ անհրաժեշտ է կադարել հիմնանորոգում:
3. Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 116+900 - կմ 127+900 (11.0կմ) կադարվել է ակնադիտական և լաբորատոր ուսումնասիրություն, չափագրում և հանգել ենք եզրակացության, որ անհրաժեշտ է կադարել հիմնանորոգում:
4. Մ-3 Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման կմ 130+400 - կմ 135+000 (4.6կմ) կադարվել է ակնադիտական և լաբորատոր ուսումնասիրություն և հանգել ենք եզրակացության, որ անհրաժեշտ է կադարել հիմնանորոգում:
5. Մ-5 Երևան - Արմավիր - Թուրքիայի սահման կմ 20+140 – կմ 24+150, կմ 30+500 - կմ 42+950 (4.01կմ) և (12.450կմ) կադարվել է ակնադիտական և լաբորատոր ուսումնասիրություն, չափագրում և հանգել ենք եզրակացության, որ անհրաժեշտ է կադարել հիմնանորոգում:
6. Հ-21 Հ-17 Հորում - Արթիկ - Ալազյազ կմ 32+700 - կմ 53+167 (20.467կմ) կազմվել է թերությունների ակտ, հայտարարվել է մրցույթ, ճանաչվել է հաղթող կազմակերպություն սակայն շինարարական աշխատանքներ չեն կադարվել:
7. Հ-33 /Մ-3/ - Սյեփանավան - Յաղդան - Այգեհատ կմ 0+000 - կմ 8+070 (8.07կմ) կադարվել է ակնադիտական և լաբորատոր ուսումնասիրություն, չափագրում և հանգել ենք եզրակացության, որ անհրաժեշտ է կադարել հիմնանորոգում:

Բոլոր կադարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում:

**3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԵՎ/ԿԱՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ  
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվետու ժամանակահատվածում լաբորատորիան իր գործառույթների ոլորտի շրջանակներում իրականացրել է տնօրինության կողմից հանձնարարված աշխատանքներ:

Լաբորատորիան իրականացրել է ուսումնասիրություններ հանրապետության մարզերում և մի շարք համայնքներում՝ ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող ճանապարհաշինարարական աշխատանքների որակի վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով, մասնավորապես.

- համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 29.10.2012թ. թիվ 02/23.12/15544-12 հանձնարարականի՝ ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում 2019թ. և 2020թ. սուբվենցիոն ծրագրերով կառուցված ներհամայնքային ճանապարհների ասֆալտաբետոնե ծածկի որակի ուսումնասիրություն - 69 հանուկ,
- համաձայն «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի տնօրինության հանձնարարականի՝ ՀՀ Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերի ավտոճանապարհների ասֆալտաբետոնե ծածկի որակի ուսումնասիրություն - 33 հանուկ:

Բոլոր կատարված հսկողությունների արդյունքները պահվում են «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժնում: